ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՄԱՆ

«30» «Մարտի» 2020թ. № 111-Ա

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել շրջակա միջավայրի նախարարի խորհրդականի պաշտոնի անձնագրի համար հետևյալ չափանիշները՝

   1) բարձրագույն կրթություն.
   2) հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
   3) 25 տարին լրացած անձ.
   4) համակարգչով և այլ ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
   5) առնվազն մեկ օտար լեզվի ազատ տիրապետում:

ՆԱԽԱՐԱՐ Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ

3/30/2020

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092

«30» Մարտի 2020թ.
Ք. Երևան